տարբերագործելու համար գեռ տարիներ են հարկաւոր, բայց մինչև այն ժամանակ Նօրէլը իր ձին հեծած և գետը անցած կը լինի, որի քայլերին մեզ հետևելու անհնար կը լինի։ Այն միտքը այժը, որ մեզ համար նկարագրում է պ. Շիրվանզադէն, անհրաժեշտ է, բայց նախ հարկաւոր է քննել թէ օրգիսի անձնաւորութիւններից պէտք է կազմակերպվի այդ այժը։ Դա պէտք է երեք արմատական այժերի միաւորելուց բաղկանայ, այն է, նաֆթային հանքատէրերից, գործարանատէրերից և նաւատէրերից, որպէս և պ. Շիրվանզադէն յիշում է։ Սակայն հարցը կայանում է նորանում, թէ այդ երեք այժերը ինչպիսի միջոցներով պէտք է շաղկապվեն, միանան և մէկ այժ կազմեն։ Ամեն ոք կը վկայի մատնատրապէս, առանց բացառութեան, թէ սրանցից ոչ մէկը մէկ կոպէկ զոհաբերութիւն չի անի միւսի օգտին և մի և նոյն ժամանակ յայտնի է և այն, որ առանց դրամական միջոցների ոչինչ անել կարելի է և հետևապէս միութիւնը մնում է հարց։ Ահա և մենք ասյն այդ կէտի վրա ենք մատնացոյց լինում, որ հարկաւոր է միութիւնը գլուխ բերելու սիստեմա, որտեղ ոչ ոք ոչինչ չը խնայի։ Իմ կարծիքով այդ միութիւնը մէկ այլ տեսակ չէ կարող լինել, եթէ ոչ հետևեալը։ Այն յիշեալ երեք արմատական գործիչները պէտք է իրանց տեսական կալուածքները մի ընտրված կոմիտեի գնահատութեամբ, ընկերութեան գործի հիմք դնեն և հրատարակեն ակցիաներ։ Ընտրված կոմիտեն, համեմատ նախագծած գաղափարին, հարկաւոր կալուածքները մացնում է ընդհանուր գործածութեան, իսկ անհարկաւորները վաճառում է առձեռն դրամի։ Ֆօտոգէնի գործարաններ միայն Բագուի մէջ կենտրոնացնել չէ հարկաւոր, այլ և Բաթում, Ցարիցին, Սարատով, Կազան և Նիժնի։ Հարկաւոր է ոչ թէ միայն կենտրոնը հեղալից նաւերով տանել այլ ամ նաւին էլ, որպէս այդ միտքը արդէն անցեալ տարի ամենին հանրածանօթ գիտնական պ. Մենդելէևը յայտնել էր։—Դա հարկաւոր է նախ այն պարզ պատճառով, որ սև նաւթը շատ հասարակ միջոցներով կարելի է տեղափոխել, երկրորդ՝ որ տեղափոխութեան մէջ այնքան մեծ կորուստ չունի որքան ֆօտոգէնը և երրորդ՝ որ վերև յիշված ամեն կենտրոնների մէջ տնագին քանակութեամբ նաւթային մնացորդ է վաճառվում։ Բացի սորանից չը պէտք է մոռանալ որ ոչ շատ հեռու ապագայի մէջ ամբողջ Ռուսաստանի երկաթուղիները վառելիքի համար կը սկսեն գործ ածելու այդ մնացորդը։ Այս միութեան մէջ ամենից կամակորները, որպէս կարելի է գուշակել, լինելու են նաւթային հանքատէրերը, բայց եթէ լաւ պարզաբանվի նրանց գործի էութիւնը և կամակորութիւնից գործին հասնելի անփախչելի-կորստաբեր վախճանը, մենք կարծում ենք որ նրանք կը հանկանան ակցիոներական ընկերութեան կազմելու անհրաժեշտութիւնը։

Այդ տեսակ ընկերութեան մէջ անդամները պահպանում են իրանց մայր գումարները և մրնալով անդամ ընկերութեան և հետևապէս ստանում են մասն աշխատանքից։ Բայց թէ որպիսի ապագայ կարող է ունենալ մի այդպիսի գործող ընկերութիւն, կարծում ենք թէ ամենին պարզ է։

Ուրեմն, եթէ մենք այդ տեսակ ընկերութիւն չը կազմենք,—կը մնանք կատարելապէս անելանելի դրութեան մէջ։

Ա. Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒԻՈՒՑ մեզ գրում են. «Ահա երեք տարի է, որ այստեղ Ա. Գանչունցով հիմնել է իր մետաքսի գործարանը։ Այդ օրը երեք չորս հարիւր մարդ է բանում։ Ամբողջ Նուխու վիճակի բոժոժը հաւաքվում է այստեղ, նրանից թել քաշվում և հազարաւոր հակերով ուղարկվում Մարսել և այլ տեղեր։ Այս գործարանը բացի Նուխու վիճակի այդ հարուստ արդիւնաբերութիւնը մշակելուց, այն բարերարութիւնն էլ արեց նուխեցիներին, որ նրա պարապ, անգործ և հացի կարօտ հարիւրաւոր մշակները օրական հաց վաստակելու միջոց գտան և կարողանում են իրանց աշխատանքով իրանց ընտանիքը սնուցանել։»

—

Մեզ պատմում են Թիւրքաց Հայաստանից եկողները որ Մոկս և Շատախ գաւառներում բնակվող քիւրդերը, ասորիները և հայերը ապրում են միասին խառն և միմեանց մէջ խիստ խաղաղ։ Նրանց մէջ չէ երևում ոչ մի կրօնական կամ ազգային երկպառակութիւն։ Բոլորը խօսում են քիւրդերէնին նման մի լեզուով, հագնվում են միակերպ, մինչև անգամ կրօնական ծէսերը և աւանդութիւնները երեք ազգութիւնների մէջ նման են միմեանց։ Պատմողները ասում են որ եթէ լինէր մի հայ-լուսաւորչական միսիոնարական ընկերութիւն, հազարաւոր քիւրդ ընտանիքներ կընդունէին լուսաւորչականութիւնը։

—

Մեզ գրում են ՆՈՒԻՈՒՑ որ վերջին տարիները ռուսական թուրք ազգաբնակութիւնը մեծ ձգտում է ցոյց տալիս դէպի ուսումը։ Քաղաքային ուսումնարանում նրանց թիւը եռապատկվել է։ Այժմ էլ մեծաքիւն քանակ առանձին ուսումնարան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լօնդոնի լորդմերի տուած սոփորական տարեկան ճաշկերոյթի ժամանակ Գլադստոնի արտասանած ճառի բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է։ Ցիշեցնելով, որ այդպիսի ճաշկերոյթին ինքը ներկայ է եղել 40 տարի առաջ Ուէլսի իշխանի ծնվելու թիւնակերին, Գլադստոն ասաց։ «Այդ հանդամանքը ինձ կը ներէ, եթէ այս անգամ ես կը խօսեմ անցեալի պատահարների մասին, որոնց ես մասնակից եմ եղել և ոչ թէ ապագայի մասին, որի վերաբերութեամբ ես շատ բան չունեմ ասելու։ Անցեալ տարի օրվայ նշանաւոր խնդիրը իրլանդական հարցն էր, որի դրութիւնը այժմ բարեբաղդաբար լաւացել է։ Այն ժամանակից մեծ փոփոխութիւններ են եղած։ Անգլիական ժողովուրդը համոզվեց, որ օրէնքները և հանգստութիւնը պաշտպանելու համար անհրաժեշտ են խիստ միջոցներ, իսկ անգլիական կառավարութիւնը իրլանդական ժողովրդին բոլոր միջոցները տուեց կալուածական օրէնքի բարիքներից օգուտ քաղելու համար»։ Խօսելով արտաքին գործերի մասին, Գլադստոն ասաց, որ այս անգամ լորդ Գրենվիլ արտաքին քաղաքականութեան մասին աւելի մեխիթարական տեղեկութիւններ կը հաղորդէ, քան թէ անցեալ տարի։ Պորտամենտական պարապմունքների առաջիկայ շրջանի մասին Գլադստոն կարծիք յայտնեց, «որ ներկայ եղողները զոնեագան կարծիքներ չեն կարող ունենալ քանի որ հարցը նրա արժանաւորութեան և օրէնսդրական այժի մասին է։ Երկրի ազգաբնակութեան շատանալու հետ, ընդարձակվում են նրա յարաբերութիւնները և շահերը, ընդարձակվում են և պարլամենտի պարտականութիւնները, մինչդեռ նրա միջոցները այդ պարտականութիւնները կատարելու համար հետզհետէ քչանում են։ Ոչ թէ կուսակցական շահերի, այլ ազգի օգտի համար անհրաժեշտ է, որ կառավարական գործերը կանոնաւոր և նպատակայարմար կատարվեն։ Մեզանից ոչ ոք չէ կարող հաւատարմութիւն վայելել, քանի որ տնանկութիւնների մասին օրէնքները անբաւականացուցիչ են և մեր բոլոր առևտրական մեծ քաղաքները այդ օրէնքների վերաքննութիւնն են պահանջում։ Այդ միջոցը յաճախ է առաջարկվում, բայց տարէց տարի յետաձգվում է միայն մեր պարլամենտական գործավարութեան պատճառով, թէպէտ միւս կողմից նա կատարեալ է։ Ցանկանում եմ, որ այդ հարցի վրա, երբ նա նորից կը բարձրանայ, նայէին ոչ թէ կուսակցութիւնների կամ վարչութեան շահերի տեսակէտից, այլ ինչպէս մի հարցի վրա, որից կախված են երկրի շահերը և որին ամեն մարդ պարտաւոր է վերաբերվել ուշադրութեամբ և անձնազոհութեամբ։»

Այնուհետև լորդ Գրենվիլ մի հայեացք գցեց արտաքին քաղաքականութեան վրա։ «Մի քանի հարցեր ուշադրութեան արժանի են, ասաց նա, բայց նրանցից ոչ մէկը կրիտիկական չէ կարելի անուանել։» Ուրախութիւն յայտնելով յունական հարցի բարեյաջող վախճանի մասին, լորդ Գրենվիլ անցաւ եգիպտական գործերին։ Ֆրանսիական կառավարութիւնը բաժանում է Անգլիայի կարծիքը եգիպտական հարցի մասին և երկու պետութիւններն էլ հետաքրքրութեամբ հետևում են Շերիֆ-փաշայի ջանքերին եգիպտոսին հանգստութիւն վերադարձնելու համար։ Այնուհետև Գրենվիլ նկատեց, որ Անգլիայի և Միացեալ Նահանգների յարաբերութիւնները նեղկայուն չափազանց բարեկամական են։

—

ՖՐԱՆՍԻԱ

Գամբետտայի վերջին տեսութիւնը Գրեվիի հետ երկու ժամ տևեց։ Խօսակցութեան ժամանակ Գամբետտա մեկնեց իր կառավարական ամբողջ նախագիծը։ Այնուհետև նա տեսնվեցաւ Ֆերրիի հետ, որին լուսաւորութեան ապագայ մինիստր են համարում։ Մինիստր կոնսան նոյնպէս այցելեց հանրապետութեան նախագահին, որպէս զի գաղտնի զուսարի հաշիւը տայ։

Մինիստրական դժուարութիւնները առհասարակ առատ նիւթ են տալիս փարիզի լրագիրներին, որոնք կառավարութեան կազմակերպութեան մասին ամեն տեսակ ենթադրութիւններ են անում։ Անգադար հաղորդում են ապագայ մինիստրների նոր նոր անուններ և թւում են նրանց արժանաւորութիւնները և հայրենիքին մատուցած ծառայութիւնները։ Այսպէս է եղել առաջ մինիստրութիւնների փոփոխութեան ժամանակ։ Այս անգամ մամուլը և հասարակական կարծիքը չափից դուրս հանգիստ են։ Լրագիրները ոչինչ չեն հաղորդում և քսա երեսոյթին չեն կարող մի բան հաղորդել։ Բացի մի երկու երեք անուններից, որոնք վաղուց տուած են, ուրիշ նորութիւններ չեն հաղորդվում։ Լրագիրները խօսում են միայն Գամբետտայի մասին։ Թէ Գամբետտա և թէ նրա բարեկամները ծածկում են լրագրական բէպօրտէօրներից իրանց նպատակները։ Բոլոր բանակցութիւնները

պատերազմելու ամենից լաւ միջոց Ամերիկայի վազը պէտք է համարենք։ Որ Ամերիկայի վազը առաւել լաւ է ընդդիմանում Ֆիլոկսերային, դա մի իրողութիւն է։ Երբ մեր Եւրոպայի վազը հաղիւ կարողանում է չորս հինգ տարի ընդդիմանալ և տալ պտուղ, Ամերիկայի վազը 15 և առաւել տարիներ տալիս է պտուղ և ընդդիմանում է Ֆիլոկսերային։ Բայց միայն այս բաւական չէ, որ տարածվեն Ամերիկայի վազերը։ Այստեղ առաջ է գալիս տնտեսական հարցը, այսինքն թէ ինչ աւելի էժան կը նստի՝ ամեն մի հինգ տարի նորից անկել մեր վազերը, որոնց կարելի է շատ էժան և մինչև անգամ ձրի գրանել, թէ ամեն մի 15 և առաւել տարի մի անգամ անկել Ամերիկայի թանգ վազը։ Շատ կարելի է այնպէս պատահի, որ առաջինը առաւել ձեռնտու լինի։ Այս կողմից նայած Ֆիլոկսերայի հարցին չէ կարելի չը համակրել մի երկրագործական ընկերութեան, որ բերել է տուել Ամերիկայի վազերի վերմերը։ Անդրկովկասում վազեր բուսացնելու և տարածելու, որ Ֆիլոկսերայի երևացած ժամանակ պատրաստ լինենք նրան հանդիպել առանց մի մեծ վնասի։—

Չեմ կարող չը յիշել այն կանոնները, որ մացրել է Շվէյցարիայի կառավարութիւնը Ֆիլոկսերայի դէմ պատերազմելու համար։ Ցիշեալ կառավարութիւնը ստիպողական դարձրեց այդիների ապահովութիւնը Ֆիլոկսերայից (обязательное страхованіе садовъ отъ филоксеры)։ Երբ մէկի այգիում երևում է Ֆիլոկսերան և այդ ճիշտ հաստատվում է—իսկոյն բոլոր այգին ոչնչացնում այրում են և այգու տիրոջը վճարում են այգու գինը՝ որ նա անկէ Ամերիկայի վազերը։ Այսպիսով ամեն մի այգեպանը ապահովված է մեծ վնասներից, որ առաջ են գալու Ֆիլոկսերայի երևալուց և մի և նոյն ժամանակ ինքը կառավարութիւնը ոչինչ չէ կորցնում իր կողմից ստանալով ապահովութեան վճարը։ Այգեպանները նմանապէս մեծ ուրախութեամբ յայտնում են Ֆիլոկսերայի երևալը, որովհետև ոչինչ չեն կորցնում,—ստանում են այգու գինը, ունեն միջոց էժան գնելու Ամերիկայի վազերը և մի և նոյն ժամանակ այրելով այգին՝ գետինը պարարտացնում են վազերից մնացած մոխրով։ Այնպէս որ կարող է պատահել, որ այգեպանը ուտ կերպով յայտնէ Ֆիլոկսերայի երևալու մասին, քան թէ թագցնէ և չը յայտնէ։ Կառավարութեան, որովհետև, կրկնում եմ նորից, այգեպանը ոչինչ չէ կորցնում նրանից, որ այրում են դրա այգին, այլ ընդհակառակը ստանում է առաւել քան թէ արժէր նրա այգին։

Ի հարկէ այսպիսի կանոնադրութեան մացնելը Անդրկովկասում Ֆիլոկսերայի երևալու ժամանակ մեծ օգուտ կը տար երկրին և ես կարծում եմ, որ երկրագործական ընկերութիւնը, որը սկսել է Ֆիլոկսերային ընդդիմանալու գործը Ամերիկայի վազերի սերմերը բերելով, կաշխատէ վերջացնել այդ գործը «տարպողական ապահովութեան» օրէնք մացնելով։ Մեզ մնում է միայն ցանկալ յիշեալ ընկերութեան յաջողութիւն։

Ուրիշ մի բան չեմ համարում փոքր ինչ ծանօթութիւն տալ վազի էլի երկու հիւանդութիւնների մասին, որոնք չատ նման են այն հիւանդութեան, որ պատճառում է Ֆիլոկսերան։ Այս հիւանդութիւններից մէկը անուանվում է «բորբոսն», իսկ միւսը «սպիտակ փտուն» (бѣлая гниль)։ Առաջին հիւանդութիւնը պատճառում է մի առանձին տեսակ ուռիճ «Dactylopus longispinus»։ Այս միջատը շատ նման է այն ուռիճին, որ ապրում է ալէանդրի ծառի վրա։ Այս միջատները ամառը անց են կացնում վազի տերևների վրա և կերակրվում են տերևների հիւթով։ Աշունքին հաւաքվում են 20—30 հատ միասին վազի վրա առանձին բներում և դրսից ծակվում են սպիտակ ոստայնակ։ Մի քանի ժամանակից յետոյ նրանք անցում են արմատների վրա և սկսում են կերակրվել նրանց հիւթով։ Արմատը սրանից սկսում է դեղնել, յետոյ սեանալ և վերջը փտել, իսկ վազը չորանում է։ Վազի այս հիւանդութիւնը շատ տարածված է Գրիմում, ուր այգեպանները կարծում են, թէ այս հիւանդութիւնը Ֆիլոկսերան է պատճառում, և շատ անգամ ի զուր չփոթի են գցում հասարակութեան մէջ։ Այս հիւանդութիւնից վազը, իսկ երբեմն գետինն էլ, որտեղ տարածված են վազի արմատները ծածկվում են մի սև քաղցր հեղուկով։ Այնպէս որ բաւական դժուար է այս վազի ուրիշ հիւանդութիւնների հետ խառնել։ Այս միջատը ջնջելու համար առաջարկում են վազին նաֆթի հետ խառնած կանեփի իւղ քսել։

Երկրորդ հիւանդութիւնը պատճառում է մի առանձին տեսակ սունկ «Rhisomorfa fragilis»։ Սա ապրում է նմանապէս վազի արմատների վրա և իր թելերը (ризоморфы) տարածում է արմատի մէջ։ Սրանից էլ վազի տերևները ուռչում, սեանում և վերջը փտում են, իսկ վազը չորանում է։ Երբ այս սունկը երևում է վազի վրա, առաջին տարին վազը շատ պտուղ է տալիս, իսկ վրա երկրորդ տարին չորանում է։ Այս հիւանդութիւնը նկատել են միայն Ֆրանսիայում։ Սրան ջնջելու համար առաջարկում են վնասված վազերը հանել արմատով և այրել—իսկ այն փոսը, որտեղից հանել են վազը, վորը ինչ մեծացնել և թաղնել այնպէս բաց մէկ կամ երկու տարի, որ այն սունկը, որ տարածված է գետնի մէջ մնացած արմատներում արեից չորանայ։

Մոսկվա Հ. Տէր-Բուռնազեան